ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 փետրվարի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

11
(3220)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՔՊ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՆԵՐՈՒՄ ԵՆ

Վերջին օրերին իրավապահ համակարգի գործողությունները հերթական անգամ հանրային տարակուսանք են առաջացնում. ՔՊ պատգամավորին հովանավորում է գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, իսկ այլախոհներին՝ պատժում նույնական արարքի համար:

2026թ. հունվարի 31-ին ոստիկանության միջոցով ծանուցագրեր են հանձնվել Մայր Աթոռի Գերագույն հոգեւոր խորհրդի մի շարք եպիսկոպոսների՝ Քննչական կոմիտե ներկայանալու համար: Քրեական վարույթը նախաձեռնվել է դատական ակտի կատարմանը խոչընդոտելու հոդվածով՝ կապված Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի (աշխարհիկ անունով՝ Արման Սարոյան) գործի հետ, այսինքն՝ դատական ակտը չկատարելու համար:

Խոսքը վերաբերում է դատարանի որոշմանը, որով արգելվել էր խոչընդոտել նրան՝ որպես Մասյացոտնի թեմի առաջնորդ, իր լիազորությունները իրականացնելու հարցում: Մինչդեռ հունվարի 27-ին Գերագույն հոգեւոր խորհուրդը հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակել Սարոյանին: Հենց այս համատեքստում էլ նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ մի շարք հոգեւորականների նկատմամբ ընտրվել է երկրից բացակայելու արգելք խափանման միջոցը:

Հիշեցնենք, որ մեղադրանքներ են առաջադրվել Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանին, Հովնան եպիսկոպոս Հակոբյանին, Մակար եպիսկոպոս Հակոբյանին, Մուշեղ եպիսկոպոս Բաբայանին, Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանին, Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանին եւ Գերագույն հոգեւոր խորհրդի քարտուղար Մովսես քահանա Սահակյանին: Վերջինս հայտարարել է, որ ինքը որոշումներ կայացնող մարմին չէ եւ միայն արձանագրումներ է կատարել:

Այս ֆոնին ուշագրավ է, որ հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը չկատարելու հիմքով, բայց դատախազը ոչինչ չի անում:

Խոսքը վերաբերում է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանին, որը 2023թ. ապրիլի 4-ին ԱԺ նիստում սպառնացել էր կտրել Ղազարյանի լեզուն եւ ականջները: Դատարանը պարտավորեցրել է նրան վճարել 1 մլն 250 հազար դրամ փոխհատուցում եւ հրապարակային ներողություն խնդրել, սակայն, ըստ Ղազարյանի, Հովհաննիսյանը հրաժարվում է ներողություն խնդրել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Նարեկ Գուրգենի Ամբարյանը երկար տարիներ զբաղեցրել է ղեկավար պաշտոններ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում: 2014թ. հուլիսի 1-ից նա եղել է կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, իսկ 2018թ. մարտի 1-ից՝նաեւ խորհրդի անդամ: Մինչ մասնավոր հատված անցնելը, Ամբարյանը աշխատել է իրավապահ համակարգում՝ եղել է ՀՀ զինվորական դատախազության հատկապես կարեւոր գործերով քննիչ, նաեւ դատախազ: Նրա հայրն էլ երկար տարիներ դատախազության լրատվական վարչության պետն էր՝ Գուրգեն Ամբարյանը: Իրավապահների հաղորդմամբ՝ Ամբարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով ղեկավար պաշտոն, իր կարգադրիչ եւ այլ լիազորությունները օգտագործել է ընկերության շահերին հակառակ՝ իր եւ այլ անձանց օգտին, ինչի հետեւանքով, ըստ մեղադրանքի, ընկերության համար առաջացել են ծանր հետեւանքներ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Ամբարյանը չի ընդունել մեղադրանքը՝ պնդելով, որ գործել է իր լիազորությունների շրջանակում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Եվրախորհրդարանի մի շարք պատգամավորներ համատեղ հայտարարություն են տարածել Ադրբեջանի կողմից հայ գերիների «դատավճիռների» վերաբերյալ: «Փետրվարի 5-ին Բաքվի ռազմական դատարանը երկարաժամկետ ազատազրկման դատավճիռներ կայացրեց 15 հայ բանտարկյալների նկատմամբ, որոնք դեռեւս պահվում են Ադրբեջանում եւ ձերբակալվել են ԼՂ հակամարտության համատեքստում: Մենք խորապես ցավում ենք այս որոշման համար, որը ներառում է հինգ ցմահ ազատազրկման դատավճիռ: Անցյալ տարի Ադրբեջանի ղեկավարությունը նշանակալի քայլեր ձեռնարկեց Հայաստանի հետ խաղաղության եւ հաշտեցման ուղղությամբ՝ ստորագրելով Վաշինգտոնի հռչակագիրը, նախաստորագրելով խաղաղության համաձայնագրի տեքստը եւ թույլ տալով, տասնամյակների ընթացքում առաջին անգամ, իր տարածքից բեռների տարանցումը դեպի Հայաստան: 2026 թվականի հունվարին ազատ արձակվեցին Ադրբեջանում բանտարկված չորս հայեր, որոնք 2020 եւ 2023 թվականներին ձերբակալվել էին»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի հայաստանյան այցի ընթացքում հնչեցված հայտարարության սխալ թարգմանությունը լայն արձագանք ստացավ հանրային եւ մեդիա դաշտում՝ հատկապես, որտեղ խոսքը Հայաստան հոսող ներդրումների մասին է, որոնք չեն լինելու փաստացի: ArmLur.am-ը թեմայի շուրջ իրականացրել է ճշտումներ եւ պարզել մի շարք կարեւոր հանգամանքներ: ArmLur.am-ի տեղեկություններով՝ ԱՄՆ փոխնախագահի խոսքը սխալ թարգմանած անձը՝ չի հանդիսանում Հայաստանի կառավարության կողմից հրավիրված թարգմանիչ, կապ չունի ԱՄՆ դեսպանատան հետ, չի ներկայացնում որեւէ հայկական կամ տեղական թարգմանչական ընկերություն: ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝ տվյալ անձը Հայաստան է ժամանել ԱՄՆ փոխնախագահի պատվիրակության կազմում, նրա հետ մասնակցել միջոցառումներին եւ նույն կերպ փոխնախագահի հետ միասին լքել է Հայաստանը:

⇨ ***էջ 5***

ԶՐՈՒՅՑ

«ԿՇԱՐՈՒՆԱԿԵՄ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՄՆԱՎՈՐՈՒՄ»

ՀՀ Ազգային Ժողովում, Գյումրու ընտրությունների ավարտից հետո, նախկին պատգամավոր Վիլեն Գաբրիելյանի հետ կատարված իրադարձություններից հետո վերջինիս մանդատը բաժին հասավ Արտյոմ Մեհրաբյանին, ով Ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահն էր:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Մեհրաբյանը խոսել է առաջիկա խորհրդարանական ընտրություններից եւ իր մասնակցությունից:

-Պարոն Մեհրաբյան, Դուք Ազգային Ժողովում գրեթե մեկ տարի եք, պատգամավորի մանդատ եք վերցրել, արդյո՞ք առաջադրվել եք հաջորդ խորհրդարանական ընտրություններում կրկին պատգամավոր դառնալու համար:

-Այո՛, եւ վարչությունը հաստատել է:

-Ի՞նչ եք արել Դուք այդ մեկ տարվա ընթացքում, որ ՀՀ քաղաքացին պետք է Ձեզ ձայն տա:

-Եկեք մի փոքր հետ գնանք, ես եղել եմ ռազմաարդյունաբերության կոմիտեի նախագահը, եւ այս ընթացքում մենք հսկայական աշխատանք են իրականացրել ոլորտի հետ, ինչպես նաեւ օրենսդրական որոշակի աշխատանքներ ենք տանում՝ հասկանալով խնդիրները, մենք աշխատում ենք օրենքների վրա, կփորձենք հասցնել մինչեւ նոր ընտրությունները ներկայացնել, այսինքն՝ աշխատանքներ տարվում են, զուտ ռազմաարդյունաբերության ոլորտի մեր գործընկերների հետ փորձում ենք այդ խնդիրները ավելի արագ լուծենք:

-Պարոն Մեհրաբյան, այս տարի ՔՊ-ն նոր կարգ է մտցրել ընտրությունների մեջ, եւ 1000 պատվիրակները պետք է ընտրեն ընտրաթերթիկի առաջին 50 մասնակիցներին, ըստ Ձեզ՝ Դուք ունե՞ք արժանիքներ առաջին 50 տեղում տեղ զբաղեցնելու համար:

-Միանշանակ չեմ կարող ասել, պարզ է՝ ես թիմի հետ 2018 թվականից եմ, մինչեւ այդ էլ ես զբաղվել եմ քաղաքականությամբ կարճաժամկետ, հետո դադարել եմ, սպասենք տեսնենք՝ ինչ գնահատական կտան:

-Իսկ Դուք ՔՊ կուսակցության անդա՞մ եք: Պատրաստվո՞ւմ եք վճարել այդ 500 հազար դրամը:

-Այո՛, ես կուսակցության անդամ եմ եւ արդեն վճարել եմ այդ գումարը, իսկ եթե այդ պատվիրակները չընտրեն, ո՛չ, չեմ ափսոսի եւ կշարունակեմ իմ աշխատանքը մասնավորում:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԲԱՔՈՒՆ ՈՒ ԵՐԵՎԱՆՆ ԻՆՔՆԻՇԽԱՆ ԵՆ

«Հայաստանն ու Ադրբեջանն ինքնիշխան պետություններ են, հետեւաբար, նրանք լիովին իրավունք ունեն հարաբերություններ կառուցելու ցանկացած երկրի, այդ թվում՝ Միացյալ Նահանգների հետ»,-հայտարարել է Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովը՝ մեկնաբանելով ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի այցը Հայաստան եւ Ադրբեջան: Այս մասին հաղորդում է ՏԱՍՍ-ը

«Նրանք ինքնիշխան պետություններ են, եւ նրանք ունեն ինքնիշխան իրավունք կառուցելու իրենց հարաբերությունները այլ երկրների հետ», - ընդգծել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղարը՝ մեկնաբանելով Վենսի այցի ընթացքում Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ԱՄՆ-ի համատեղ լայնամասշտաբ ծրագրերի մասին հայտարարությունները:

Վենսի այցը Հարավային Կովկաս ավարտվում է այսօր: Նա Հայաստան էր այցելել փետրվարի 9-10-ին, որից հետո մեկնել Ադրբեջան:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ ԱՄՆ փոխնախագահ Վենսը ստորագրել է «Միջուկային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման ոլորտում ՀՀ կառավարության եւ ԱՄՆ կառավարության միջեւ համագործակցության մասին համաձայնագրի բանակցությունների ավարտի վերաբերյալ համատեղ հայտարարությունը»: Վենսը նաեւ հայտարարել է այն մասին, որ լայն հնարավորություններ են բացվել խոշոր ծրագրերի իրականացման համար, եւ ամերիկյան տեխնոլոգիաները կգան Հայաստան: Իսկ Բաքվում նա Միացյալ Նահանգների անունից ստորագրել է Ադրբեջանի հետ ռազմավարական գործընկերության խարտիան:

ՎԵՆՍԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է

Ջեյ Դի Վենսը Բաքվում քննարկել է բանտարկյալների ազատ արձակման հարցը, Իլհամ Ալիեւի հետ նրա հանդիպումից հետո հայտնել է ԱՄՆ փոխնախագահի մամուլի խոսնակը, հաղորդում է «Ազատությունը»:

«Նախագահ Ալիեւը եւ փոխնախագահ Վենսը քննարկել են նախագահ Թրամփի՝ Հայաստանում եւ Ադրբեջանում խաղաղություն հաստատելու նախաձեռնության հաջորդ քայլերը: Նրանք կենտրոնացել են առեւտրի եւ բարգավաճման, տեխնոլոգիաների եւ դիվանագիտական կապերի վրա, նաեւ խոսել են հաջորդ քայլերի մասին, այդ թվում՝ Միջազգային խաղաղության եւ բարգավաճման Թրամփի ուղու (TRIPP) համար պայմանագրերի կնքման եւ թույլտվությունների, ինչպես նաեւ վստահության ամրապնդման միջոցառումների, ինչպիսիք են բանտարկյալների ազատ արձակումը, ամերիկյան ներդրումները եւ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան», - փոխանցել է փոխնախագահի խոսնակը:

Ամերիկյան կողմը, սակայն, չի մանրամասնել՝ ինչ արձագանք է եղել ադրբեջանական կողմից, եւ կան արդյոք այս հարցով պայմանավորվածություններ:

Ջեյ Դի Վենսը Երեւանում թռիչքից առաջ խոստացել էր Բաքվում բարձրացնել հայ գերիների հարցը:

Հայ գերիները Բաքվում դատապարտվել են երկարատեւ, որոշ դեպքերում՝ ցմահ ազատազրկման:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Խալիլ Շիրոզլամիին: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ նախագահի աշխատակազմը: Նախագահը շնորհավորել է Իրանի ժողովրդին Իսլամական հեղափոխության հաղթանակի 47-ամյակի առթիվ՝ խնդրելով իր բարեմաղթանքները փոխանցել Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանին: Նա ընդգծել է Հայաստանի համար Իրանի հետ բարեկամական հարաբերությունների շարունակական զարգացման կարեւորությունը:

Հանդիպման ընթացքում նախագահը կարեւորել է տարբեր մակարդակներում փոխայցելությունների ակտիվացումը՝ տնտեսական եւ հատկապես ենթակառուցվածքների ոլորտում առկա հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործումը: Նախագահը նաեւ ընդգծել է, որ Հայաստանը բարձր է գնահատում Իրանի ղեկավարության հստակ դիրքորոշումը Հայաստանի տարածքային ամբողջականության եւ սահմանների անխախտելիության վերաբերյալ: Դեսպան Խալիլ Շիրոզլամին շնորհակալություն է հայտնել ընդունելության եւ շնորհավորանքի համար՝ նշելով հանդիպման նշանակությունը երկկողմ հարգանքի եւ համագործակցության տեսանկյունից: Հանդիպմանն անդրադարձ է կատարվել հայ-իրանական բազմոլորտ համագործակցության օրակարգային հարցերին, տարածաշրջանում տիրող իրավիճակին:

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

«Մեր ձեւով» շարժման մամուլի խոսնակ Մարիաննա Ղահրամանյանը հայտնում է. «Երեկ՝ փետրվարի 11-ին, կայացավ Սամվել Կարապետյանի կուսակցության համագումարը:

Համագումարն ընտրեց նոր նախագահ եւ խորհուրդ: Սամվել Կարապետյանը միաձայն ընտրվեց կուսակցության նախագահ:

Վաղը (այսօր)՝ փետրվարի 12-ին, 13:00-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա կուսակցության պաշտոնական շնորհանդեսը, որի ժամանակ կհայտարարվի կուսակցության վարչապետի թեկնածուի անունը:

Հայաստանյան եւ օտարերկրյա ՁԼՄ-ների համար կապահովվի ուղիղ հեռարձակում՝ բաց հղումով: Լրագրողները հնարավորություն կունենան միջոցառմանը հետեւել դահլիճից՝ առանց նկարահանող խմբի: Միջոցառման ավարտին մամուլի ասուլիս նախատեսված չէ:

ՁԼՄ ներկայացուցիչներին խնդրում ենք նախապես հավատարմագրվել եւ ներկայանալ միջոցառման մեկնարկից 20 րոպե շուտ»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՌՈՒՍԱՍՏԱՆ–ՈՒԿՐԱԻՆԱ ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐ

Ռուսաստանը եւ Ուկրաինան նոր հարվածներ են հասցրել միմյանց, որոնց հետեւանքով Ուկրաինայում կան զոհեր, Ռուսաստանում՝ ավերածություններ:

Ռուսական հարվածների հետեւանքով Ուկրաինայի Խարկովի մարզում չորս մարդ է զոհվել, այդ թվում՝ երեք երեխա: Այս մասին հաղորդում է BBC-ի ռուսական ծառայությունը:

«Երեկ (փետրվարի 10-ին) երեկոյան թշնամին կրկին հարվածային անօդաչու թռչող սարքով հարձակվել է Բոգոդուխով քաղաքում գտնվող մասնավոր հատվածի վրա: Հարված է հասցվել բնակելի տան, որն ամբողջությամբ փլուզվել է: Հրդեհ է բռնկվել 60 քառակուսի մետր տարածքի վրա: Փրկարարները փլատակներից դուրս են բերել չորս զոհի՝ 34-ամյա տղամարդու եւ երեք երեխայի մարմիններ: Վիրավորվել է եւս երկու մարդ, այդ թվում՝ 35-ամյա հղի կին»,-հայտնել են փրկարարները:

Տեղական իշխանությունները ռուսական հրետակոծությունների պատճառով Խարկովի մարզի էներգետիկ ոլորտում ստեղծված իրավիճակը հայտարարել են «արտակարգ»:

Կիեւի քաղաքապետ Վիտալի Կլիչկոն հայտարարել է, որ Դարնիցայի ՋԷԿ-ին ռուսական հարվածների հասցրած վնասի պատճառով չեն կարող ջեռուցվել Կիեւի Դարնիցկիի եւ Դնեպրովսկի շրջանների 1100 բազմահարկ շենքեր:

Կլիչկոն հայտնել է, որ տարբեր շրջաններում եւս 200-ից ավելի շենք ջեռուցումից զուրկ է:

Ընդհանուր առմամբ, գիշերը ՌԴ-ն Ուկրաինայի ուղղությամբ արձակել է 129 անօդաչու թռչող սարք, որոնցից 100-ը խոցվել են կամ ճնշվել:

Ռուսաստանի պաշտպանության նախարարությունն իր հերթին հայտնել է, որ փետրվարի 11-ի գիշերը հակաօդային պաշտպանության համակարգերը խոցել են 108 ուկրաինական անօդաչու թռչող սարք Վոլգոգրադի, Ռոստովի, Սարատովի, Բրյանսկի եւ այլ մարզերում, Կալմիկիայում, Թաթարստանում:

Ռոստովի նահանգապետ Յուրի Սլյուսարը հայտնել է, որ ԱԹՍ-ները հետ են մղվել 12 քաղաքներում եւ շրջաններում: Նահանգապետի խոսքով՝ Տարասովսկի շրջանում վնասվել է էլեկտրահաղորդման գծի հենարանը, որի հետեւանքով երեք մասնավոր տուն մնացել է առանց էլեկտրաէներգիայի:

Վոլգոգրադի մարզի նահանգապետ Անդրեյ Բոչարովը հայտնել է գիշերը ուկրաինական անօդաչու թռչող սարքերի կողմից իրականացված զանգվածային հարձակման մասին: Տեղեկությունների համաձայն՝ Վոլժսկիում վնաս է հասցվել բնակելի շենքի բնակարաններից մեկին, Յագոդկայում ԱԹՍ-ն բախվել է մանկապարտեզի շենքին, իսկ Վոլգոգրադի հարավում գտնվող գործարանում հրդեհ է բռնկվել: Նախնական տվյալներով՝ զոհեր չկան:

Telegram ալիքների փոխանցմամբ՝ անօդաչու թռչող սարքերը, հնարավոր է, թիրախավորել են «Լուկոյլ-Վոլգոգրադնավտոպերերաբոտկա» ընկերությանը պատկանող նավթավերամշակման գործարանը:

ՎՃՌՈՐՈՇ Է ԼԻՆԵԼՈՒ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ԻՆՔՆԱԳՈՎԱՔԴՈՎ ԵՆ ՁԲԱՂՎԱԾ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ երեկ՝ ՔՊ վարչության նիստի ժամանակ, վարչության անդամներն արդեն բաշխել են ՔՊ նախընտրական ցուցակի անձանց համարները:

Այսինքն՝ 280 հոգուց բաղկացած ՔՊ նախընտրական ցուցակի յուրաքանչյուր անդամ ունի քվեաթերթիկի իր համարը:

Այսօր ՔՊ կենտրոնական գրասենյակում կկայանա ՔՊ նախընտրական ցուցակի ներքին քվեարկությունը, եւ 280 հոգանոց ցուցակից ընդամենը 50-ը կընտրվեն, որոնք պետք է ներառվեն 2026 թվականի ՔՊ նախընտրական ցուցակում: Այնուհետեւ համագումարի ժամանակ այդ 50 անձանց հերթականությունը կորոշվի ցուցակում:

Այս պահին ՔՊ-ում ներքին քարոզարշավ է ընթանում. բոլորը իրենց ֆեյսբուքյան էջերով դիմում են ՔՊ-ի 1000 պատվիրակներին՝ խնդրելով իրենց ձայն տալ: ՔՊ-ականներին արգելվել է, բացի իրենց սոցիալական էջերից, այլ հարթակներում քարոզարշավ իրականացնել:

Հիշեցնենք, որ դեռ հունվարի 23-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանը մտադիր է երկար եւ բազմափուլ գործընթացի միջոցով ընտրել 2026 թվականի ընտրություններին մասնակցող ՔՊ առաջատարներին՝ գործընթացը պահելով խիստ ներքին մրցակցության դաշտում: Նախատեսվում է, որ ամբողջ ընտրական շղթան՝ 280-ից մինչեւ 50-ի կրճատումը, իրականացվելու է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում՝ պատվիրակների քվեարկությունների միջոցով, որտեղ վճռորոշ դեր կունենա ոչ միայն քաղաքական անցյալը, այլեւ քարոզչական արդյունավետությունը:

Այսինքն՝ այսօրվա քվեարկությունը վճռորոշ կլինի շատ ՔՊ-ականների համար. շատերը գուցե դուրս մնան ընտրական պայքարից:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Միջազգային լրատվամիջոցներում բավական մեծ աղմուկ է բարձրացրել ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր այցից հետո կատարված առաջին գրառման հեռացումը X սոցիալական հարթակում նրա էջից:

Ջեյ Դի Վենսը եւ նրա կինը՝Ուշա Վենսը, փետրվարի 10-ին այցելել էին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ էին դրել Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ, ծաղիկներ խոնարհել անմար կրակի մոտ, որից հետեւ X-ում Վենսի էջում հրապարակված գրառման մեջ նշվել էր, որ փոխնախագահը եւ ԱՄՆ երկրորդ տիկինը ծաղկեպսակ են դրել «Հայոց ցեղասպանության հուշահամալիրում՝ հարգանքի տուրք մատուցելով 1915 թվականի Հայոց ցեղասպանության զոհերին»:

ԱՄՆ փոխնախագահն իր էջում այնուհետեւ կիսվել է իր խոսնակի կատարած հետեւյալ գրառմամբ. «Փոխնախագահը եւ երկրորդ տիկինը ծաղիկներ են դրել անմար կրակին եւ գրառում արել հուշամատյանում Հայաստան այցի վերջին օրը»: Գրառմանը կցվել են նաեւ լուսանկարներ եւ հուշամատյանում Վենսի գրառումը:

CNN-ը գրում է, որ այս մասին հարց են ուղղել Սպիտակ տան մամուլի քարտուղար Քերոլայն Լեւիթին, որը նշել է, որ ԱՄՆ վարչակազմի քաղաքականության մեջ որեւէ փոփոխություն չի եղել:

«Ինչ վերաբերում է ձեր նշած հայաստանյան թվիթին, կարող եք հղում կատարել Սպիտակ տան կողմից Հայերի հիշատակի օրը հրապարակված ուղերձին, եւ այս պահին քաղաքականության մեջ որեւէ փոփոխություն չի եղել», - ասել է Լեւիթը փետրվարի 10-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:

Իր հերթին, Reuters-ը հաղորդում է, որ Վենսի օգնականը, որի անունը չի նշվում, հայտարարել է, որ առաջին գրառումը հրապարակվել է սխալմամբ, անձնակազմի անդամներից մեկի կողմից, որն ԱՄՆ փոխնախագահի պատվիրակության մաս չէր կազմում Հայաստան այցի ընթացքում:

«Սա օգտահաշիվ է, որը կառավարվում է անձնակազմի կողմից եւ հիմնականում փոխնախագահի գործունեությանն առնչվող լուսանկարներով եւ տեսանյութերով կիսվելու համար է», - ասել է Վենսի խոսնակը՝ հավելելով, որ նրա տեսակետները լավագույնս ներկայացվում են լրագրողներին հենց նրա կողմից տրված մեկնաբանություններում:

Հայաստանից մեկնելիս «Զվարթնոց» օդանավակայանում Վենսը լրագրողների հետ զրույցում անդրադարձել էր այս հարցին եւս՝նշելով, որ Ծիծեռնակաբերդ է այցելել հայկական կողմի առաջարկով:

«Նրանք ասացին՝ «սա մեզ համար շատ կարեւոր վայր է», եւ ակնհայտ է, որ ես առաջին (ԱՄՆ) փոխնախագահն եմ, որ երբեւէ այցելել է Հայաստան: Նրանք խնդրեցին մեզ այցելել այդ վայր: Բնականաբար, շատ սարսափելի բան է տեղի ունեցել հարյուր տարուց մի փոքր ավելի առաջ, եւ դա շատ-շատ կարեւոր է նրանց համար մշակութային առումով», - մեջբերում է Վենսի խոսքերը The Associated Press գործակալությունը, որը նույնպես հոդված է հրապարակել փոխնախագահի էջում գրառման հեռացման թեմայով:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՇՈՒԿԱՆԵՐ

Համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ), ԲՐԻԿՍ-ի եւ Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) հետ Իրանի տնտեսական քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից մեկն է: Ըստ ՏԱՍՍ-ի թղթակցի՝ այս մասին հայտարարել է Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանը՝ Իսլամական հեղափոխության հաղթանակի 47-րդ տարեդարձի առթիվ ազգին հղած ուղերձում:



«(Երկրի) եւ արդյունաբերության զարգացման համար մեզ անհրաժեշտ են շուկաներ, եւ առաջին փուլում դրանք իսլամական երկրներն են եւ մեր հարեւանները, իսկ այնուհետեւ՝ փոխգործակցության ամրապնդումը ԵԱՏՄ-ի, ԲՐԻԿՍ-ի, ՇՀԿ-ի, Իսլամական համագործակցության կազմակերպության, Տնտեսական համագործակցության կազմակերպության շրջանակներում», - ասել է Իրանի նախագահը:

2023 թվականին Իրանն անդամակցել է ՇՀԿ-ին: Իսլամական Հանրապետությունը ԲՐԻԿՍ-ի լիիրավ անդամ է դարձել 2024 թ. հունվարի 1-ին: 2025 թ. մայիսին ուժի մեջ է մտել ԵԱՏՄ-ի եւ Իրանի միջեւ ազատ առեւտրի մասին լիաֆորմատ համաձայնագիրը, որը նախատեսում է ներմուծման մաքսատուրքերի նվազում ապրանքային անվանացուցակի 90%-ի համար:

ԴԱՏԱՐԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՐԵԼ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԵՄ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Կարգալույծ արված 2 հոգեւորականների՝ Ստեփան Ասատրյանի (նախկինում՝ տեր Արամ) եւ Արամայիս Թախմազյանի (նախկինում՝ տեր Թադե)՝ Մայր աթոռի դեմ հայցադիմումները վերադարձվել են:



Հիշեցնենք,որ հոկտեմբերի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ էր հռչակվել տեր Արամ քահանա Ասատրյանը:

Տնօրինության համար հիմք էր ծառայել Արագածոտնի թեմի առաջնորդի զեկուցագիրը եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախմբի եզրակացությունն առ այն, որ Տ. Արամ քահանա Ասատրյանը՝

«ա/ Հրապարակային ելույթներով ու հայտարարություններով վարկաբեկել է Հայ Եկեղեցին, Թեմական առաջնորդին եւ ծառայակից եկեղեցականներին,

բ/ Անտեսելով Թեմական Առաջնորդի հորդորներն ու հրահանգները՝ հարատեւել է կարգազանց ընթացքի մեջ,

գ/ Վերջին մեկ ամսվա ընթացքում պատարագներին կամայականորեն զեղչել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Թեմական Առաջնորդի անունների հիշատակության հատվածը՝ այդ քայլով, ըստ էության, իրեն դուրս դնելով Եկեղեցուց,

դ/ Երիցս համառել է ներկայանալ Հանձնախմբի նիստերին, շրջանցելով վերջինիս հեղինակությունն ու իրավասությունները, ինչպես նաեւ իր անարգալից վարքագծով դրժել հնազանդության ուխտը:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Ստեփան Ասատրյան ավազանի անունով»:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ էր հռչակվել Թալինի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Թադե քահանա Թախմազյանը:

«Ստեփան Արտակի Ասատրյանի հայցադիմումն ընդդեմ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպության՝ Սուրբ Հովհաննավանքի Հոգեւոր Հովվի պաշտոնից կարգալույծ հռչակելու Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի 21.10.2025թ. թիվ 1042 հայրապետական տնօրինությունն անվավեր ճանաչելու, որպես հետեւանք հայցվորին Սուրբ Հովհաննավանքի Հոգեւոր Հովվի պաշտոնում վերականգնելու պահանջի մասին վերադարձնել»:

Հայցադիմումները վերադարձնելու որոշումները կայացրել են դատավորներ Սիմա Աբովյանը եւ Պարգեւ Մելքոնյանը:

Հայցադիմումներում առկա թերությունները վերացնելու համար եռօրյա ժամկետ է տրամադրվել:

Ավելին, մեզ հայտնի դարձավ, որ

1. Արամայիս Դավթի Թախմազյանի հայցադիմումն ընդդեմ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպության՝ Սուրբ Հովհաննավանքի հոգեւոր Հովվի պաշտոնից կարգալույծ հռչակելու Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի 02.12.2025թ. հայրապետական տնօրինությունն անվավեր ճանաչելու, որպես հետեւանք հայցվորին Թալինի տարածաշրջանի հոգեւոր Հովվի պաշտոնում վերականգնելու պահանջի մասին վերադարձնել:

2. Հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշումը, հայցադիմումը եւ դրան կից փաստաթղթերը եռօրյա ժամկետում պատշաճ ձեւով ուղարկել հայցվորին:

3. Հայցադիմումում առկա թերությունները վերացնելու համար հայցվորին տրամադրել եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից:

4. Հայցվորին պարզաբանել, որ թույլ տրված խախտումները վերացվելու եւ եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ներկայացված է համարվում սկզբնապես ներկայացնելու օրը:

5. Որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան հայցվորների կողմից՝ այն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում:

Հիշեցնենք, որ Ստեփան Ասատրյանն ու Արամայիս Թախմազյանը պահանջում են Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի որոշումն անվավեր ճանաչել եւ վերականգնել իրենց հովվական պաշտոններում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ

Հունվարի 29-ին Համայնքային ոստիկանության Բազումի բաժնի ծառայողները ստացել են տեղեկություն, որ Գայի փողոցի բնակիչ հայր ու որդի տանը զբաղվում են ապօրինի ձեռնարկատիրությամբ՝ արտադրում եւ իրացնում են մսամթերք: Տեղեկություն կար նաեւ, որ որդին մոտը պահում է թմրամիջոց:

Նույն օրը՝ ժամը 19:30-ին, 26-ամյա որդին հայտնաբերվեց Վարդանանց փողոցում: Նա ներկայացրեց դեղնականաչավուն զանգվածով թղթե փաթեթ եւ երկու կաթուցիչ: Նա չժխտեց, որ տանը 60-ամյա հայրը երկար ժամանակ ապխտում է մսամթերք եւ այն իրացնում Վանաձորի շուկայում:

Լոռու մարզային քննչական վարչությունում նույն օրը նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում իրականացված նախնական զննությամբ Գայի փողոցի նրանց տան նկուղում հայտնաբերվեց ապօրինի պատրաստված 159 հատ մսամթերք, նաեւ մսամթերք պատրաստելու հաստոցներ, գործիքներ եւ հումք: Իսկ արդեն փետրվարի 4-ին նույն տեղում կատարված խուզարկությամբ հայտնաբերվեցին եւս 465 հատ մսամթերք, ապուխտի համար նախատեսված 77 տոպրակ եւ գործիքներ:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Փետրվարի 7-ի երեկոյան ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդում է ստացվել Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին: Օտարերկրացի մի կին ահազանգել է, թե իր ընկերուհու հայրը եկել է արտասահմանից, դստերը սպառնացել, որ կսպանի, այժմ էլ առեւանգել է նրան:

Համայնքային ոստիկանների անհետաձգելի միջոցառումներով օպերատիվորեն պարզվել է ահազանգողի ընկերուհու գտնվելու վայրը:

Համայնքային ոստիկան Կարեն Քարամյանի խոսքով՝ ահազանգը ստանալուն պես ոստիկանության ծառայողները մեկնել են առեւտրի կենտրոն, որտեղ հանդիպել են երիտասարդ կնոջը: Նա հաստատել է, որ հայրը սպառնացել է սպանել իրեն: Ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 48-ամյա տղամարդն այդ պահին գտնվում է Երեւանի Արամի փողոցի սրճարաններից մեկում: Ոստիկաններն անմիջապես մեկնել են տվյալ վայր:

Ոստիկանների տեղեկությունը ճիշտ էր: Արտասահմանից ժամանած 48-ամյա տղամարդը սրճարանում հայտնաբերվել, հոգեկան ներգործության կասկածանքով ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին:

Հաշվի առնելով նախկինում կատարված եւ բացահայտված նմանատիպ ողբերգական դեպքը, երբ ոստիկաններին չէին տեղեկացրել հետապնդումների մասին, արագ ահազանգման եւ օպերատիվ արձագանքման արդյունքում համայնքային ոստիկաններին հաջողվել է կանխել հետագա զարգացումները:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին, տղամարդը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

ԹՄՐԱՄԻՋՈՑ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փետրվարի 7-ին Սիլիկյան թաղամասի 4-րդ եւ Սահակ Պարթեւի փողոցների խաչմերուկի մոտ հայտնաբերել, թմրամիջոց ձեռք բերելու, պահելու, օգտագործելու եւ իրացնելու կասկածանքով ձերբակալել եւ, իր կողմից շահագործվող «Կիա» մակնիշի մեքենայով հանդերձ, վարչություն են տարել 27-ամյա մի երիտասարդի: Բացատրական աշխատանքի արդյունքում նա հայտնել է, որ մեքենայում խոշոր չափի թմրամիջոց կա:

Երեւանի բնակիչ երիտասարդը կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է նախաքննական մարմին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: Հատուկ պահպանվող տարածք տեղափոխված մեքենայի խուզարկությամբ հայտնաբերվել են 1218 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգված եւ հաշիշի յուղով 3 սրվակ:

Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության տվյալների՝ փետրվարի 9-ից 10-ը գրանցվել է 10 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 14-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՃԱՌՎԵԼ Է

Իջեւան քաղաքի Երեւանյան փողոցի թիվ 27/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 186.0 քմ մակերեսով հողամասի վրա Թաթուլ Իսախանյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 62 քառակուսի մետր արտաքին մակերեսով տնտեսական շինությունը, որի ներքին մակերեսը կազմում է 45.6 քմ, ճանաչվել է օրինական համայնքային սեփականություն: Իջեւանի համայնքապետարանում որոշել են, որ անհրաժեշտություն է առաջացել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող 62 քմ արտաքին մակերեսով ինքնակամ տնտեսական շինությունն իր զբաղեցրած 186.0 քմ մակերես հողամասով վաճառել կառույցն իրականացրած Թաթուլ Իսախանյանին: Տնտեսական շինության զբաղեցրած 186.0 քմ մակերեսով հողամասը եւ 62.0 քմ մակերեսով տնտեսական շինությունը չեն խոչընդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն դասվում ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ: Իսախանյանն Իջեւանի համայնքապետարան դիմում է տվել, որպեսզի ինքնակամ կառույցը նախապատվության իրավունքով վաճառվի իրեն: Փետրվարի 2-ին Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը որոշել է կառույցն իրականացրած Թաթուլ Իսախանյանին գնման նախապատվության իրավունքով՝ուղղակի վաճառքով, Իջեւան քաղաքի Երեւանյան փողոցի, թիվ 27/2 հասցեում գտնվող 186 քմ մակերեսով հողամասը վաճառել 1 քառակուսի մետրը 2887.5 ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ընդհանուր՝537 հազար 75 ՀՀ դրամ արժեքով, իսկ 62 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը՝ 1քառակուսի մետրը՝3346 ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ընդհանուր՝ 207 հազար 452 ՀՀ դրամ արժեքով:

ՆԵՂՈՒՄ ԵՆ

Երեւան-Իջեւան, Իջեւան-Երեւան միկրովտոբուսային երթուղու վարորդները դժգոհում են, որ վերջին շրջանում իրենք Երեւանից Իջեւան եւ հակառակ ուղղությամբ մեկնում են քիչ ուղեւորներով: Դրա պատճառն այն է, որ այդ երթուղին հագեցած է այն սպասարկող տաքսի ավտոմեքենաներով: Դրանցից մեկը 7 տեղանոց միկրոավտոբուս է սպասարկում եւ համացանցում տեղադրել է օրվա մեջ տարբեր ժամերին իր ուղերթների ժամերը: Երեւան-Իջեւան եւ հակառակ ուղղությամբ գործող միկրոավտոբուսների վարորդները կասկածում են, որ այդ գծում աշխատող տաքսիստները հարկային դաշտում չեն գործում, այսինքն՝ առկա է անհավասար մրցակցություն: Նրանք ասում են, որ ուղեւորների թվի նվազման պատճառով հասարակական տրանսպորտի այդ երթուղին կարող է փակվել, ինչից կտուժեն սոցիալապես անապահով ուղեւորները: Այդ երթուղու հասարակական տրանսպորտի ուղեվարձը 1500 դրամ է, 7 տեղանոց միկրոավտոբուս տաքսու ուղեվարձը 2000 դրամ, իսկ 4 ուղեւորներով տաքսու դեպքում՝2500 դրամ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼԱՅՆ ԱՐՁԱԳԱՆՔ

Ո՞Վ ԷՐ ՎԵՆՍԻ ԽՈՍՔԸ ՍԽԱԼ ԹԱՐԳՄԱՆԵԼ

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի հայաստանյան այցի ընթացքում հնչեցված հայտարարության սխալ թարգմանությունը լայն արձագանք ստացավ հանրային եւ մեդիա դաշտում՝ հատկապես, որտեղ խոսքը Հայաստան հոսող ներդրումների մասին էր, որոնք չեն լինելու փաստացի:

ArmLur.am-ը թեմայի շուրջ իրականացրել է ճշտումներ եւ պարզել մի շարք կարեւոր հանգամանքներ:

Ո՞վ էր թարգմանիչը

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ԱՄՆ փոխնախագահի խոսքը սխալ թարգմանած անձը՝

- չի հանդիսանում Հայաստանի կառավարության կողմից հրավիրված թարգմանիչ,
- կապ չունի ԱՄՆ դեսպանատան հետ,
- չի ներկայացնում որեւէ հայկական կամ տեղական թարգմանչական ընկերություն:

ArmLur.am-ի աղբյուրների փոխանցմամբ՝տվյալ անձը Հայաստան է ժամանել ԱՄՆ փոխնախագահի պատվիրակության կազմում, նրա հետ է մասնակցել միջոցառումներին եւ նույն կերպ փոխնախագահի հետ միասին լքել է Հայաստանը:

Հարկ է նշել, որ «Ստուգված է»-ի (media.am) մեր գործընկերներն արդեն հրապարակել են Վենսի խոսքերի ճշգրիտ թարգմանության վերաբերյալ փաստերի ստուգման հոդվածը:

Վենսը մասնավորապես ասել է. «Մենք նաեւ շատ հպարտ ենք հայտարարելու, որ մեր երկրները ավարտել են բանակցությունները «1, 2, 3 քաղաքացիական միջուկային համագործակցության» համաձայնագրի շուրջ: Երբ դա ամբողջությամբ կարգավորվի, ճանապարհ կհարթի ամերիկյան եւ հայկական ընկերությունների համար՝ գործարքներ կնքելու քաղաքացիական միջուկային նախագծերի շուրջ: Դա նշանակում է նախնական մինչեւ 5 միլիարդ դոլարի ամերիկյան արտահանում, գումարած լրացուցիչ 4 միլիարդ դոլարի երկարաժամկետ աջակցություն վառելիքի եւ սպասարկման պայմանագրերի միջոցով: Սա դասական փոխշահավետ գործարք է եւ՛ Հայաստանի, եւ՛ Ամերիկայի Միացյալ Նահանգների համար»:

Անգլերեն՝ «That means up to $5 billion in initial US exports, plus an additional 4 billion in long-term support through fuel and maintenance contracts»:

Մինչդեռ համաժամանակյա թարգմանիչը «արտահանում» բառը թարգմանել է որպես «ներդրում», ինչի վրա հիմնվելով՝ հայաստանյան ՁԼՄ-ները գրել են, որ ԱՄՆ-ն այս ոլորտում «իրականացնելու է 9 միլիարդ դոլարի ներդրում»:

Ստացվում է, որ թարգմանչական սխալի համար ո՛չ կառավարությունն է մեղավոր, ո՛չ ԱՄՆ դեսպանատունը, այլ հենց ԱՄՆ պատվիրակությունը:

Հարկ է նշել, որ հայկական կողմի թարգմանիչը երկարամյա «Թարգմանչաց վարպետ» կոչումը ստացած Խաչատուր Ադումյանն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՐԱՆԸ ՊԵՏՔ Է ՀՐԱԺԱՐՎԻ

Թեհրանը ցանկանում է համաձայնագիր կնքել Վաշինգտոնի հետ՝ հայտարարել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը՝ շեշտելով, որ Իրանը պետք է հրաժարվի իր միջուկային ու հրթիռային ծրագրերից: Այս մասին նա ասել է Fox Business-ին տված հարցազրույցում: «Դա լավ գործարք կլինի՝ոչ մի միջուկային զենք, ոչ մի հրթիռ, ոչ մի ավելորդ բան», - հայտարարել է Թրամփը: Նա հավելել է, որ Իրանը ցանկանում է հասնել համաձայնության:

«Ինչպես գիտեք, այժմ հսկայական նավատորմ է շարժվում դեպի Իրան: Տեսնենք, թե ինչ կլինի: Կարծում եմ, որ նրանք ցանկանում են գործարք կնքել: Կարծում եմ՝նրանք հիմարություն կանեն, եթե դա չանեն»,-հավելել է ԱՄՆ առաջնորդը: Նա հիշեցրել է, որ 2025 թ. հունիսին ԱՄՆ-ն հարվածներ է հասցրել Իրանի այն օբյեկտներին, որոնք կապված են միջուկային ծրագրի հետ: «Անցյալ անգամ մենք շարքից հանել ենք նրանց միջուկային ներուժը. տեսնենք՝այս անգամ արդյոք ավելի շատ վնաս կհասցնենք», - հավելել է ԱՄՆ նախագահը:

Փետրվարի 10-ին Թրամփը Axios-ին տված հարցազրույցում ասել է, որ հաջորդ շաբաթ սպասում է Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ բանակցությունների հաջորդ փուլին, բայց նաեւ հնարավոր է համարում երկրորդ ավիակիր հարվածային խմբի ուղարկումը դեպի Իրան:

Թրամփը նաեւ լավատեսություն է հայտնել ԱՄՆ-ի եւ Իրանի տարաձայնությունների կարգավորման դիվանագիտական ուղու հարցում եւ կրկնել, որ իր կարծիքով՝ Թեհրանը ցանկանում է համաձայնագիր կնքել:

Մասկատում փետրվարի 6-ին Օմանի միջնորդությամբ տեղի են ունեցել ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ անուղղակի բանակցություններ: Իրանը հայտարարել է, որ կքննարկի միայն իր միջուկային ծրագիրը, իսկ իր հրթիռային ծրագիրը միայն պաշտպանական նպատակ է հետապնդում:

ԱՌԱՆՑ ՎԻԶԱ ՉԵՆ ԿԱՐՈՂ

Եվրամիության երկրների մեծ մասը կողմ է արտահայտվել վրացական դիվանագիտական անձնագրեր ունեցողների համար առանց վիզայի ճանապարհորդությունների կասեցմանը: Այս մասին X հարթակի իր էջում տեղեկացրել է «Ազատություն» ռադիոկայանի եվրոպական հրատարակության խմբագիր Ռիկարդ Յոզվիակը: 25 երկիր կողմ է քվեարկել, միայն երկու երկիր՝ Հունգարիան եւ Սլովակիան՝ դեմ: Որոշումն ուժի մեջ կմտնի մարտի սկզբին, որից հետո Վրաստանի դիվանագետներն այլեւս չեն կարողանա առանց վիզայի ճանապարհորդել ԵՄ երկրներ:

Վրաստանի եւ ԵՄ-ի միջեւ անայցագիր ռեժիմը գործում է 2017 թվականից: 2025 թվականին Վրաստանում ընդունված, այսպես կոչված, «օտարերկրյա գործակալների մասին» օրենքի պատճառով կողմերի հարաբերությունները սրվել են: ԵՄ ավելի քան 10 երկիր չեղարկել է վրացական դիվանագիտական եւ ծառայողական անձնագրեր ունեցողների համար առանց վիզայի ճանապարհորդությունները:

ԼՈՒԿԱՇԵՆԿՈՆ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն չի մեկնի Խաղաղության խորհրդի շրջանակներում առաջնորդների հանդիպմանը: Այս մասին հայտնել է Լուկաշենկոյի մամուլի քարտուղար Նատալյա Էյսմոնտը, փոխանցում է «Пул Первого» Telegram-ալիքը:

«Այո, Բելառուսի նախագահը ստացել է Խաղաղության խորհրդի շրջանակներում առաջնորդների առաջին հանդիպման հրավերը: Ցավոք, մենք այն ուշ ենք ստացել եւ այդ ժամանակահատվածի համար նախագահի աշխատանքային գրաֆիկն արդեն պլանավորված էր:

Այո, մենք հաճույքով կայցելեինք Ամերիկայի Միացյալ Նահանգներ, սակայն կան հարցեր, որոնք հնարավոր չէ հետաձգել»,- ասել է Էյսմոնտը:

Բացի այդ, նրա խոսքով, հաշվի են առնվում նաեւ «հնարավոր լոգիստիկ բարդությունները, որոնք կարող են առաջանալ ապօրինի պատժամիջոցների պատճառով»՝ առաջին հերթին Եվրամիության կողմից, հաշվի առնելով ԵՄ օդային տարածքի փակ լինելը:

«Այս կապակցությամբ եւ հակառակ մեր ցանկությանը՝Նախագահը չի կարողանա մասնակցել տվյալ միջոցառմանը:

Միեւնույն ժամանակ ընդգծեմ, որ մենք լիովին կիսում ենք ԱՄՆ նախագահի եւ Խաղաղության խորհրդի նպատակաուղղվածությունը՝բոլոր համաշխարհային հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու հարցում»,- ասել է Բելառուսի նախագահի մամուլի քարտուղարը:

Ըստ Էյսմոնտի՝ Վաշինգտոնում Բելառուսը կներկայացնի արտաքին գործերի նախարարը, ով «լիովին տիրապետում է Խաղաղության խորհրդում Բելառուսի Հանրապետության մասնակցության թեմատիկային, ինչպես նաեւ տարածաշրջանային իրավիճակի եւ բելառուսա-ամերիկյան երկկողմ հարաբերությունների այլ հարցերին»:

Ամերիկյան կողմն արդեն տեղեկացվել է այդ որոշման մասին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝Հանրապետությունում փետրվարի 9-ից 10-ը հայտնաբերվել է 7 հետախուզվող, կամավոր ներկայացել՝2-ը:*

ԼՈՒՐԵՐ

ՄԱԿ-Ի ԿՈՉԸ

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նախագահ, Գերմանիայի նախկին արտգործնախարար Աննալենա Բերբոքը, Ստրասբուրգում գտնվող Եվրախորհրդարանում ելույթ ունենալով, կոչ է արել աշխարհին աջակցել ՄԱԿ-ին եւ հետեւել նրա կանոնադրությանը: Այդ մասին տեղեկանում ենք Deutsche Welle-ն:

«Ներկայիս աշխարհակարգը ոչ միայն ճնշման տակ է, այլեւ ենթարկվում է հարձակման: Աշխարհը ՄԱԿ-ի կարիքն ունի, եւ հենց հիմա խաղաղությունն անհրաժեշտություն է»,- հայտարարել է Բերբոքը:

Ստրասբուրգում ունեցած իր ելույթում Գերմանիայի նախկին արտգործնախարարը մատնանշել է Ուկրաինայում, Գազայի հատվածում եւ Սուդանում տեղի ունեցող պատերազմները, Վենեսուելայի եւ Իրանի ճգնաժամերը, ինչպես նաեւ Գրենլանդիայի շուրջ ստեղծված վեճը:

«Այն իրավիճակում, երբ ՄԱԿ-ի գործունեությունը հատկապես անհրաժեշտ է, նույնիսկ այն ուժերը, որոնք հատուկ պատասխանատվություն են կրում խաղաղության եւ անվտանգության պաշտպանության համար, երես են թեքում դրանից»,-ցավով նշել է Բերբոքը:

ԱՅՑԸ ՉԵՂԱՐԿՎԵՑ

Կանադայի Բրիտանական Կոլումբիայի նահանգի դպրոցներից մեկում տեղի ունեցած հրաձգությունից հետո երկրի վարչապետ Մարկ Քարնին չեղարկել է Գերմանիա կատարելիք այցը: Այս մասին հաղորդում է BBC-ն՝ հղում անելով վարչապետի գրասենյակին: Քարնին պետք է ներկա գտնվեր Մյունխենի անվտանգության համաժողովին, որն անցկացվելու է փետրվարի 13-15-ը: Համաժողովը կհյուրընկալի ավելի քան 60 պետությունների եւ կառավարությունների ղեկավարների, որոնց քննարկման օրակարգում են տարբեր թեմաներ՝ արհեստական բանականությունից մինչեւ կարեւորագույն մատակարարման շղթաներ, աջակցությունն Ուկրաինային եւ ՆԱՏՕ-ին:

Կանադայի Թամբլեր Ռիջ համայնքի դպրոցում կին հրաձիգը կրակ է բացել, որի հետեւանքով 6 մարդ զոհվել է տեղում, մեկը՝ հիվանդանոցի ճանապարհին: Եւս 2 մարդու մարմին հայտնաբերվել է այս հրաձգության հետ առնչություն ունեցող մոտակա տներից մեկում: Հրաձիգն ինքնասպան է եղել:

ՄԱՀԱՓՈՐՁ

Կոլումբիայի նախագահ Գուստավո Պետրոն հայտարարել է, որ ուղղաթիռը, որտեղ գտնվել է ինքը, հարկադրված է եղել փոխել երթուղին՝ իր դեմ պատրաստված մահափորձի պատճառով: Այդ մասին տեղեկանում ենք ՏԱՍՍ գործակալությունից: «Ես վայրէջք չկատարեցի այնտեղ, որտեղ պետք է վայրէջք կատարեի, որովհետեւ կասկածներ կային, թե ուղղաթիռի վրա, որտեղ նաեւ գտնվում էին իմ երեխաները, կրակ կբացեն»,-ասել է նա կառավարության նիստում, որը հեռարձակվել է նախագահի վարչակազմի YouTube ալիքով: Պետրոյի խոսքով՝ իրեն հաջողվել է խուսափել մահափորձից:

«Մենք չորս ժամ թռանք բաց ծովի երկնքում եւ հասանք այնտեղ, ուր չէինք պլանավորել»,-ասել է նա:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՏԱՐԻՆ Գ

ՖԱՍԹ ԲԱՆԿՆ ՈՒ VISA-Ն ԱՄՓՈՓԵԼ ԵՆ

Ֆասթ Բանկը եւ Visa միջազգային վճարահաշվարկային համակարգը, ամփոփելով գործակցության մեկ տարին, արձանագրել են համատեղ նախագծի նշանակալի հաջողություններն ու ձեռքբերումները. կարճ ժամանակահատվածում ընկերությունները հասցրել են իրականացնել մի շարք համատեղ նախաձեռնություններ եւ արշավներ: Ընդամենը մեկ տարվա ընթացքում Ֆասթը ձեւավորել է քարտատանների մեծ համայնք եւ խոսուն ներկայություն:

Visa վճարահաշվարկային համակարգի Կովկասում եւ Մոլդովայում տարածաշրջանային մենեջեր Դիանա Կիգուրաձեն հպարտությամբ է խոսել Ֆասթ Բանկի եւ Visa-ի գործընկերության մասին. «Մեր գործակցությունն սկսվեց այն ժամանակ, երբ Ֆասթ Բանկը կատարեց համարձակ քայլ՝ դառնալով Visa-ի լիիրավ անդամ եւ պատրաստ լինելով թողարկել քարտեր եւ մատուցել էքվայրինգի ծառայություններ: Այդ ժամանակից ի վեր մենք տպավորիչ առաջընթաց ենք գրանցել: Միասին մենք զրոյից կառուցել ենք հզոր վճարային ենթակառուցվածք՝ մշակելով ժամանակակից վճարման մեթոդներ եւ թողարկելով նորարարական պրոդուկտներ: Ես հպարտ եմ, որ մեր համատեղ ջանքերի արդյունքում Visa Infinite-ը հասանելի դարձավ Ֆասթ Բանկի հաճախորդներին՝ ամրապնդելով Հայաստանի պրեմիում սեգմենտը: Շնորհակալություն, Ֆասթ Բանկ, ձեր վստահության, նպատակասլացության եւ կատարելությանը մշտապես ձգտելու համար: Շնորհավորում եմ մեր գործընկերության առաջին տարեդարձը՝ նայելով դեպի ավելի պայծառ ապագա»,-ասել է նա:

Ֆասթ Բանկն իր հաճախորդներին այսօր առաջարկում է քարտերի լայն տեսականի՝ Visa Digital, Visa Classic, Visa Gold, Visa Infinite, Visa Infinite Metal եւ Visa Business Platinum: Visa քարտերը Ֆասթ Բանկի ստեղծագործական թիմի մտահղացմամբ ներկայացված են ինքնառճ դիզայնով՝ ակնով, որը խորհրդանշում է ապագայի զարկերակն զգալու Բանկի տեսլականը: Յուրաքանչյուր ԱկնՔարտ ունի բազմաթիվ առավելություններ:

Ֆասթ Բանկի քարտային տեխնոլոգիաների դեպարտամենտի ղեկավար Անի Արշակյանը նշել է. «2023 թվականին Ֆասթ Բանկը մեծ աշխատանքներ է իրականացրել Visa վճարահաշվարկային համակարգի հետ համատեղ քարտեր թողարկելու ուղղությամբ, եւ այդ ընթացքում իրականացրել ենք մեծ տեխնիկածրագրային առաջադրանքներ, քարտերի դիզայնի յուրօրինակ աշխատանք: Ես հույս չեմ հայտնում, այլ համոզված եմ, որ Visa վճարահաշվարկային համակարգի հետ մեր համատեղ ձեռքբերումները շարունակվելու են, եւ այդ համակարգի հետ մեր համագործակցությունը կարող եմ համարել մեր լավագույն նախագծերից մեկը»:

Ֆասթ Բանկն ակտիվ համագործակցության մեջ է Visa վճարահաշվարկային համակարգի գործընկերների հետ եւ իրականացնում է քայլեր նոր պրոդուկտների ու հնարավորությունների ներդրման ուղղությամբ:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ Գ

ԱՐՇԱՎ ԿԱ

Այս տարի Myler Mountain Resort-ում հանգստացողների համար աննախադեպ արշավ կա. մինչեւ 2026թ. մարտի 15-ը Մայլերում կատարելով վճարումներ Idram&IDBank հավելվածով Իդրամ QR-ի միջոցով, կստանաք մինչեւ 20% ակնթարթային idcoin: Ընդ որում, արշավը տարածվում է ոչ միայն լեռնադահուկային համալիրի ծառայությունների, այլ նաեւ ռեստորանների ցանցի, քոթեջների, ինչպես նաեւ Myler-ի տարածքում գործող բոլոր այն վայրերի վրա, որտեղ առկա է Իդրամ QR-ով վճարում կատարելու հնարավորությունը: Արշավի շրջանակում մեկ հաճախորդին օրացուցային ամսվա ընթացքում բոլոր վճարումների դիմաց հանրագումարային ենթակա է հաշվարկման եւ տրամադրման առավելագույնը 20,000 idcoin (հարկումից հետո): Ի դեպ, արշավին մասնակցած եւ Բանկի հաճախորդ չհանդիսացող օգտատերերը, որոնք արշավի ընթացքում Idram&IDBank հավելվածի միջոցով կսինքրոնացվեն եւ կդառնան Բանկի հաճախորդ, արշավի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կստանան 1000 idcoin (հարկումից հետո):

Ընկերությունները վերահսկվում են ՀՀ ԿԲ կողմից

ԴԱՐՁԵԼ Է A-ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՆԴԱՄ

Յունիբանկը միացել է Հայ-բրիտանական գործարարության պալատին (ABBC)՝ որպես A-մակարդակի անդամ, ինչը բանկի համար կարեւոր քայլ է միջազգային համագործակցության ամրապնդման եւ

համաշխարհային գործարար համայնքի հետ ակտիվ փոխգործակցության ընդլայնման ուղղությամբ:

ABBC-ին անդամակցելով՝ Յունիբանկը վերահաստատում է իր հանձնառությունը՝ աջակցելու միջազգային բիզնեսի զարգացմանը, խրախուսելու օտարերկրյա ներդրումները, նպաստելու բարենպաստ եւ թափանցիկ գործարար միջավայրի ձեւավորմանը:

Հայ-բրիտանական գործարարության պալատի առաքելությունն է զարգացնել եւ ընդլայնել Հայաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ առեւտրային եւ ներդրումային կապերը, այդ թվում՝ B2B հարաբերությունները, շուկա մուտք գործելու ռազմավարությունները, ներդրումային ծրագրերը, ներմուծման եւ արտահանման ընթացակարգերը:

«Մենք ուրախ ենք միանալ Հայ-բրիտանական գործարարության պալատին: Այս անդամակցությունը Յունիբանկին հնարավորություն է տալիս ամրապնդել համագործակցությունը բրիտանական ընկերությունների հետ եւ մասնակցել համատեղ նախաձեռնությունների իրականացմանը՝ նորարարություններին, ներդրումներին եւ տնտեսական աճին նպաստելու նպատակով»,-ասաց Յունիբանկի Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը:

«Ուրախ ենք ողջունել Յունիբանկին որպես Հայ-բրիտանական գործարար պալատի A-մակարդակի անդամ: Բանկի բարձր հեղինակությունն ու Հայաստանի ֆինանսական ոլորտում երկարամյա ներդրումը կարեւոր փորձ եւ արժեք են բերում մեր համայնքին: Վստահ ենք, որ մեր համագործակցությունը կնպաստի գործարար երկխոսության խորացմանը եւ Մեծ Բրիտանիայի ու Հայաստանի միջեւ տնտեսական կապերի ամրապնդմանը», -նշեց ABBC-ի գործադիր տնօրեն Լուսինե Աչոյանը:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ

Team Telecom Armenia-ն («Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ) տեղեկացնում է իր բաժանորդներին, որ այսուհետ ծառայությունների դիմաց վճարումները հնարավոր է կատարել նաեւ Idram&IDBank հավելվածով՝ որպես վճարման աղբյուր ընտրելով IDBank-ի հաշիվները (բանկային, խնայողական եւ քարտային) կամ Rocket Line թվային ապառիկը: Ընկերությունների միջեւ համագործակցության մասին պայմանավորվածությունը ձեռք է բերվել՝ հաշվի առնելով հաճախորդների կողմից վճարումների կատարման առավելագույն հարմարավետությունը:

Team Telecom Armenia-ի մասին

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«Gulfood 2026» Գ

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԻՐ ՄՐԳԵՐԸ

Մրգերի արտադրությամբ զբաղվող հայկական Fun Fruit ընկերությունն օրերս Դուբայում մասնակցել է «Gulfood 2026» սննդի եւ ոչ ալկոհոլային խմիչքների միջազգային ցուցահանդեսին: Լինելով ոլորտի ամենախոշոր հարթակներից մեկը՝ «Gulfood» ցուցահանդեսն այս տարի մեկ հարկի տակ էր միավորել ավելի քան 120 երկրի ազգային տաղավարներ: Հայկական Fun Fruit-ը սեփական տաղավարում ներկայացել է իր արտադրած արեւահամ տանձի ու խնձորի տեսակներով:

Fun Fruit ընկերության նախագահ Վահագն Բաղալյանը նշել է. «2021 թվականից ի վեր Fun Fruit ընկերությունն Արագածավան համայնքում հիմնել է 300 հեկտարից ավելի ինտենսիվ այգիներ՝ տանձի, տափակ դեղձի, խնձորի, կեռասի, ծիրանի: Մենք այստեղ՝ «Gulfood»-ում, մասնակցում ենք սեփական տաղավարով, որպեսզի ընդլայնենք մեր ներկայությունն Արաբական Միացյալ Էմիրություններում եւ շրջակա երկրներում: Շուկայում գործունեություն ենք ծավալում արդեն երկու տարի: Մենք ունենք սեփական 10-ից ավելի բեռնատար մեքենաներ, որով կազմակերպում ենք բեռնափոխադրումները Հայաստանից դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ»:

Fun Fruit-ն արդեն երկրորդ անգամ է մասնակցում «Gulfood»-ի կողմից կազմակերպված միջոցառմանը: Ցուցահանդեսի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ համտեսել են հայկական արեւահամ մրգերը՝ առաջարկելով նոր համագործակցություններ: Վահագն Բաղալյանը նշում է՝ առաջիկայում պատրաստվում են շուկան ընդլայնել. «Նաեւ մենք մասնակցել ենք 2025 թվականի սեպտեմբերին Asia Fruit Logistica ցուցահանդեսին, նույնպես մեր սեփական տաղավարով, որտեղ ներկայացնում էինք հայկական, մեր սեփական արտադրության մրգերը եւ փորձում էինք ընդլայնվել նաեւ այդ շուկաներում»,-ասել է նա:

«Gulfood» ցուցահանդեսը դարձավ կարեւոր հարթակ՝ Fun Fruit-ի արտադրանքը ներկայացնելու, ինչպես նաեւ ոլորտի լավագույն մասնագետների եւ առաջատար արտադրողների հետ արդյունավետ կապեր հաստատելու համար:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՐԱՁԻԳՆԵՐԻ ՄԵԴԱԼՆԵՐԸ

Պատանի հրաձիգները Եվրոպայի առաջնությունում թիմային մրցաշարում դարձել են բրոնզե մեդալակիր: Այս մասին տեղեկացնում է Հայաստանի հրաձգության ֆեդերացիայի մամուլի ծառայությունը: Բուլղարիայի Բուրգաս քաղաքում ավարտվեց Մ16 եւ Մ18 տարեկանների Եվրոպայի առաջնությունը: 10 մետր օդամղիչ ատրճանակ վարժության մինչեւ 18 տարեկան տղաների եռյակի ձեւում Արմեն Գեւորգյանը, Հայկ Սարգսյանը եւ Արտակ Ամիրյանը 880,2 միավորով դարձան թիմային մրցաշարի բրոնզե մեդալակիրներ: Հայաստանի պատանեկան հավաքականը, ընդհանուր առմամբ, նվաճեց մեկական ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալ:

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԸ

Երեւանում փետրվարի 16-21-ը կկայանա բասկետբոլի Եվրասիական լիգա-Երեւանի քաղաքապետի գավաթ միջազգային մրցաշարը:

«Երեւանի քաղաքապետարանի հետ եկել ենք այն մտքին, որ մեզ պրոֆեսիոնալ բասկետբոլային լիգա է պետք: Հայաստան են ժամանելու ուժեղ կազմերով թիմեր՝ վրացական «Օրբի»-ն, լիբանանյան «Հուպս»-ը, ամերիկյան «Փայլոթ»-ը, ղազախական «Բարսի»-ն, ինչպես նաեւ կմասնակցեն հայկական «Հատիս», «Ուրարտու» ու «Էրեբունի» ակումբները: Առաջնությանն, ընդհանուր առմամբ, մասնակցում է 7 թիմ»,- «Արմենպրես»-ի մամուլի սրահում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Եվրասիական լիգայի նախագահ Կարեն Գիլոյանը:

Վերջինիս խոսքով՝ այս կերպ հայկական ակումբները հնարավորություն կունենան փորձ կուտակել միջազգային խաղերի համար, ինչը հնարավորություն կտա հաջորդիվ առավել խոշոր մրցաշարերի մասնակցել:

«Մեր նպատակն է, որ հասկանանք, թե արդյոք մենք մրցունակ ենք, մրցակցային ենք այլ թիմերի հետ: Եթե լավ հանդես գանք այստեղ, հետագայում կմտածենք՝ մասնակցել միջազգային մրցաշարերի՝ Չեմպիոնների լիգային կամ եվրոգավաթին»,-ասաց Գիլոյանը, ով նաեւ հայկական «Ուրարտու» ակումբի նախագահն է:

«Բասկետբոլ մարզաձեւի առավել մասսայականացման համար ֆեդերացիայի հետ համատեղ մանկապարտեզներում անցկացնելու ենք ուսումնական ծրագիր: Երեւանի քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում է խաղային մարզաձեւերը, այդ թվում նաեւ բասկետբոլը»,-ասաց նա:

Ըստ Մակվեցյանի՝ քաղաքապետարանը կարեւորում է նմանատիպ միջազգային մրցաշարերի անցկացումը մայրաքաղաքում: Այս տարի մրցաշարի մրցանակային ֆոնդը կազմում է 6 միլիոն դրամ: Մրցաշարը շարունակական բնույթ կկրի:

Եվրասիական լիգան կկայանա փետրվարի 16-21-ը «Սպորտի զարգացման կենտրոնում» (նախկին «Միկա» մարզահամալիր): Եզրափակիչը կկայանա փետրվարի 21-ին: Մուտքն ազատ է:

ԱՇԽԱՐՀ

ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնում կայացել է Պայծառ Սարիբեկյանի «Հայաստանի համընդհանուր պատմությունը» գրքի շնորհանդեսը:

Մոսկվայում «Արմենպրես»-ի թղթակցի փոխանցմամբ՝բացման խոսքով հանդես է եկել մշակույթի կենտրոնի ղեկավար Վլադիմիր Գաբբեն: Կարեւորելով նախաձեռնությունը՝ նա նշել է, որ գիրքը կարող է դառնալ հիանալի ուղեցույց այն հայ երեխաների եւ երիտասարդների համար, որոնք մեծանում են հայրենիքից հեռու՝ նպաստելով նրանց ազգային ինքնության պահպանմանն ու պատմական գիտակցության խորացմանը: Շնորհանդեսը վարել է մշակութաբան, Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի դասախոս Աշոտ Ավետիսյանը:

Հեղինակի կատարած աշխատանքը բարձր են գնահատել բանասիրական գիտությունների թեկնածու Աիդա Մարանջյանը, ինչպես նաեւ բանաստեղծ եւ գրականագետ Ավագ Հովսեփյանը՝ընդգծելով աշխատության գիտական արժեքն ու կրթադաստիարակչական նշանակությունը: Երեկոյի ընթացքում հանդես է եկել մշակույթի կենտրոնի մենեջերուհի Ֆլորա Նազարյանը՝ ներկայացնելով երաժշտական կատարումներ:

Շնորհանդեսին ներկա է եղել նաեւ հայ ժողովրդի լեգենդար զավակ Շավարշ Կարապետյանը: Միջոցառման ավարտին հյուրերը հնարավորություն են ունեցել ձեռք բերել գիրքը՝ հեղինակի ընծայագրով:

ՔՈՒՐԹ ՔՈԲԵՅՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Nirvana խմբի առաջատար Քուրթ Քոբեյնի մահը 1994 թվականին ցնցել է երկրպագուներին եւ երաժշտական աշխարհը: Լեգենդար երաժիշտը մահացել է ապրիլի 5-ին 27 տարեկան հասակում՝ Սիեթլի իր տանը գլխին ստացած հրազենային վերքից: Ըստ Daily Mail-ի՝ Քինգ շրջանի դատաբժշկական փորձագետը դեպքը որակել է որպես ինքնասպանություն:

Այնուամենայնիվ, տասնամյակներ անց դատաբժշկական փորձագետների մասնավոր խումբը վերանայել է դիահերձման եւ հանցագործության վայրի նյութերը, եւ արդյունքները կարող են փոխել այն ամենը, ինչը մենք կարծում էինք, որ հայտնի է:

Անկախ քննիչ Միշել Ուիլկինսը հայտնել է, որ ընդամենը երեք օրվա վերլուծությունից հետո դատաբժշկական փորձագետ Բրայան Բարնեթը հայտարարել է. «Սա սպանություն է: Ինչ-որ բան պետք է արվի»:

Ըստ թիմի, դիահերձման արդյունքները վկայում են օրգանների անսովոր վնասվածքների մասին, որն ավելի շատ համապատասխանում է հերոինի չափից մեծ դոզայի, քան հրազենային կրակոցից անմիջապես մահվան: Մասնագետները նշում են, որ Քոբեյնը, հնարավոր է, ֆիզիկապես անշարժացած է եղել մահացու կրակոցից առաջ, եւ «ինքնասպանության» տեսարանը ուշադիր բեմադրվել է.

երաժշտի ձեռքը մաքուր էր, ինչը խիստ անսովոր է որսորդական հրացանի համար,

զենքը կշռում էր մոտավորապես 6 ֆունտ եւ պահանջում էր զգալի ուժ գործադրելու համար,

հերոինի պարկուճներն ու ներարկիչները կոկիկ դասավորված էին, կարծես ինչ-որ մեկը նախապատրաստել էր տեսարանը,

Քոբեյնի ենթադրյալ «վերջին նամակը» գրված էր այլ ձեռագրով եւ ինքնասպանության մասին չէր հիշատակվում:

«Տեսարանը նման էր ֆիլմի, որտեղ նրանք ուզում էին, որ բոլորը հավատան, որ դա ինքնասպանություն է», - բացատրում է Ուիլքինսը:

Պաշտոնյաները շարունակում են անդրդվելի մնալ:

Քինգ շրջանի դատաբժշկական փորձագետը եւ Սիեթլի ոստիկանությունը հայտարարում են, որ չկան ապացույցներ, որոնք կարդարացնեն դատավարությունը:

«Մեր դետեկտիվը եզրակացրել է, որ Քոբեյնը ինքնասպան է եղել, եւ այդ դիրքորոշումը մնում է», - հաստատել է ոստիկանությունը: Այնուամենայնիվ, փորձագետների թիմը շեշտում է՝ իրենց նպատակն է հասնել թափանցիկության եւ ապացույցների վերանայման:

Վերանայման վերաբերյալ հարցումները մերժվել են, բայց ռոք աստղի վերջին ժամերի շուրջ վեճը շարունակվում է:

● *Փետրվարի 12 -ին՝ ժամը 19:00-ին, Կ. Ս. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Նռենի» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Աղրանքներ եւ տրանսպորտային միջոցներ ներմուծելիս հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու դեպքում տուգանքի ի՞նչ չափ է սահմանված, եթե խախտումը առաջացնում է մաքսային վճարների պակաս հաշվարկում:

Վարդուհի Գասպարյան, 45 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 203 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում, առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաեւ տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 212 հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները ենթակա են վերցման:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Ստելլա Գրիգորյան, 43 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ armenpress-ից

Կայացավ Երվանդ Քոչարի 125-ամյակին նվիրված «Քարը» ներկայացման պրեմիերան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	-3 - 8 - 2 + 2
	Կոտայքի լեռներ	- 2 - 6 - 2 + 2
	Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 + 1 + 3
	Գեղարքունիք	- 2 - 7 - 1 + 2
	Լոռի	- 2 - 7 + 3 + 6
	Տավուշ	- 2 - 5 - 3 + 6
	Արագածոտնի լեռներ	- 3 - 6 - 2 + 1
	Արագածոտնի նախալեռներ	- 3 - 1 0 + 3

	Արարատ	- 2 + 2 + 3 + 5
	Արմավիր	- 3 + 2 + 3 + 6
	Վայոց ձորի լեռներ	-3 - 7 0 - 2
	Վայոց ձորի նախալեռներ	-2 + 2 + 2 + 5
	Սյունիքի լեռներ	-4 - 7 0 - 3
	Սյունիքի նախալեռներ	0 - 4 + 5 + 8
	Սյունիքի հովիտներ	+ 1 + 5 + 8 + 11
	Երեւան	- 1 + 1 + 3 + 5

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*